

ՀԱՍՏԻ

Rédaction du Journal Arménien "ARCHALOUYCE" Hotel d'Arménie S. Bulbulian (Egypte) LE CAIRE

Directeur EGHICHÉ TOROSSIAN

Ծանուցումներ մասնաւոր պայմաններով կ'ընդունուին :

Ձեռագիրներ եւ չեմ տուիր :

ԱՐՇԱԼՈՍՅԱՆ

ԱՉԳԱՅԻՆ . ԳՐԱԿԱՆ . ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

— 100 —

ԼՊԻՊՏՈՍ

Ցարեկան 40 Եգ. ս. ց.

Վեցամսայ 20

ԱՐՏԱՍԱՆՍԱՆ

Ցարեկան 12 Եգ.

Ապահով բաժանորդագրութիւն չի' ընդունուիր :

ՓԲԹ 23

ՏՆՕՐԼՆ. - ԽՄՐԱԳԻՐ ԵՂԵՑԻ ԲՕՐՈՍՏԱՆ

Արտօճեալ եղիպտական կառայարութեան

ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԱՊԵՏ ՄԻՆԱՍ ԵՐՈՒՆԵԱՆ

ՓԲԹ 23

ԵԳԻՊՏԱՎԱՅՈՑ

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Եգիպտոսի Առաջնորդութիւնը կը նմանի այն վիպային և չքնադագեղ դիցունհին, որուն ներկայացող փեսացուներէն, շատ քիչերուն տըրուած է զայն հրապուրելու յաջողութիւնը...

Եւ արգարե՛ եթէ ենթադրեալ դիցունհին կարծիր թշեր, սե աշուկներ, նանագոյն չրթներ, զմայլելի դէմք, լայն կուրծք և բարեձև հասակ մը ունի, Եգիպտոսը այս ամեն կազմային շնորհներուն փոխան ունի դեղնորակ Սուրբ Գեւորգիները, որոնց շէջուցի տեսքը և յաղթական մուտքը՝ դէպի մուկ գրպանները, ապահովեալ յաղթանակներ նկատուած են Առաջնորդփեսացուներուն համար. ու երանի' անոնց՝ որ այս վերջին մեղկացուցիչ հրապոյրներէն չեն յաղթահարուիր:

Եգիպտոսի թեմին առաջնորդական աթոռը, երբ իր ծանր բեռներուն տակ կ'ընկնէ, զայնս իր վրայէն նետելու կը յաջողի՝ քիչ մը շունչ առնելու համար, այն ատեն վերաբաւորներու երկար ու չնչապառ տողանցն է որ սրարչաւ վազք մը կը կատարէ, իր ծանրութենէն բաժին մը հանելու համար յոգնաբեկ աթոռին...

Եւ այս վերջին քառորդ դարուն մէջ՝ ասոնցմէ որքա՛ն յուսախաբուածներու դիտահակ վերադարձին ականատես չ'եղանք...

Բարեբաղդաբար մեր արդի նորընտիր Առաջնորդին պարագաները նոյնը չեղան սակայն: Գեր. Տ. Թորգոմ Եպս. Գուշակեան՝ ինքը չէր որ բաղդատնդիր ուղևորի պառնայր ծանրաբեռնուած՝ իր ապագայ հարսնցուին գեղայն ու շնորհներուն վրայ հիանալու և զայն հըրապուրեղու կ'ուզար, այլ Աղաւնունիներէ ամուսնալուծեալ հարսին բուն արժանիքները և իսկական բարեմասնութիւնները արտացոլացնելու համար յատկապէս կանչուած էր. և զինքը հոս մեր քով բերող այդ հրաւիրագիրը՝ զեթ նախնական Դատարանէ մը ստացուած նը...

պատուաւոր դատաւիճիւ, կը ներկայացնէր բարձրագոյն և վերաքննիչ ատենախմբի զայն հաստատելու համար, ինչ որ տեղի ունեցաւ կիրակի օրը՝ Աղէքսանդրիոյ մէջ տեղի ունեցած համագումար Երեսփոխանական ոճիովին մէջ. միաձայնութեամբ Եգիպտոսի Առաջնորդական աթոռին պակը գրուելով իր գլխուն վրայ, իբրև Առաջնորդի:

Այս անգամ Գեր. Տ. Թորգոմ Եպիսկոպոսն է որ պիտի բացազանչէ. և ինչի՛ տեսի՛ և յաղթեցի... Մաղթենք որ նորին Գերապատուութիւնը՝ իր ապագայ գործերով ալ պարագայն է իր տարած յաղթանակին կցուած բոլոր յոյսերը... և չի պատահի այն՝ որ ժողովրդավար բարձր պաշտօններու հետ համընթաց եղած է տարաբաղդաբար Հայոց մէջ. « Ընթացիկ » ի բարձունս, և ապա՝ ի խաչ հան գրա...

Հաւաստի աղբիւրներէ ստացուած անդեղութեանց համաձայն, Աղէքսանդրիացիները՝ որ սովորութիւն ունին ստեպ պօսթկալու, անխառն թողուցած չեն Գեր. Տէր Թորգոմ Եպիսկոպոսի առաջնորդական ընտրութեան պարագան ալ, թէև այս յուզումնալից պօսթկալու՝ Տ. Թորգոմ Եպիսկոպոսի անձին և պաշտօնավարութեանը հետ յարաբերութիւն չունենալով, տարբեր սկզբունքի մը շուրջը ստեղծուած փոթորիկ մը եղած ըլլայ:

Մեր Աղէքսանդրիացի քիչ մը դիւրաբար զգայիները, կը պահանջեն եղեր որ՝ տեղւոյն թեմական Երեսփոխանութիւնը, որ Օրմանեան Արքեպիսկոպոսի Պատրիարքութեան օրով նոր պատրաստուած և կազմական կանոնագրի մը համաձայն ընտրուած ըլլալով ապօրինի կը նկատուի, նախապէս լուծուի, և անոնց տեղ նոր ընտրութիւն կատարուելէ յետոյ միայն տեղի ունի. նայ Առաջնորդական Ընտրութիւնը՝ Ահա՛ իրենց պահանջին համառօտութիւնը՝ որ Գեր. Տ. Թորգոմ Եպիսկոպոսի Առաջնորդական ընտրութեան օրին վերապահած են եղեր, անտարակոյս իրենց կատարի պայքարողի ընդունակութիւնը ցուցադրելու համար նորընտիր Առաջնորդին...

Եթէ երբեք կեօզ ճաղի տալու չի դիտարուութեամբ եղած չեն անոնք. Աստուած մի՛ արասցէ. եթէ ես ընտրուելի Եգիպտոսի Առաջնորդը, մէկ կուտ չ'պիտի տայի Թիւթիւնհիներէ մարմին առած այդ ազմկայող ցոյցերուն, եթէ նոյնիսկ այդ Թիւթիւնհիները Docteur en Droit ի վկայականով ալ զինուած ըլլային...

Մեր Աղէքսանդրիացիները շատ աւելի կանուխէն կրնային իրենց այդ սահմանադրասիրական պահանջը ընել առ որ անկ էր. բայց հիմայ աւելի նախընտրելի է կարծենք՝ որ նորընտիր Առաջնորդին յառաջիկայ գործունէութեան մէջ տեսնելու յետաձգուի այդ օրինասիրական պահանջին լուծումը, չի մոռնալով միանգամայն Եգիպտական կառավարութեան այն առաջարկը, որով կուզէ Սահմանադրութեան տրամադրութիւնները տեղական օրէնքին համապատասխանող վիճակի մը վերածուիլ, ինչ որ կը նշանակէ թէ՛ մեր Ազգ. Սահմանադրութեան տրամադրութիւններուն կառչիլ մընալը գրեթէ անօգուտ պիտի ըլլայ:

Առ այժմ միանանք ամենս ալ՝ և միաձայն ու լիաշուքին շնորհաւորենք մեր նոր Առաջնորդին ընտրութիւնը, և ասիկայ գրաւականը թող ըլլայ, յառաջիկայ դժուարին կացութեանց ատեն իրեն աջակցելու մեր խոստումը արտայայտող, որովհետև նորին Գերապատուութեան մօտակայ աշխատութիւնները գիւրացնելու և անոնց ծանրութիւնն ու դառնութիւնները քաղցրացնելու նպատակաւ եղած նման խոստումներու անխուսափելի պէտքը զգալի պիտի ըլլայ...

ԴԵՂՆԱԾ ԹՈՒՂԹԵՐ

ԳՍՅԸ ԵՒ ՍԱՔԻ

- (Շարն. նախորդ թիւէն և վերջ) — Ինչ ապուշ մարդ. ըսաւ վահէ, — Սկրուկ'նը, ըսաւ Գառնիկ, — Իչու պէս կը խաբեն կոր, — Ինքզինքը բանի մը տեղ գրեր է, — Երկու հոմանունէի... դուն հաւատացիր...

- Զգէ՛ Աստուածդ սիրես, — Սըվոր պոյը նայէ... — Լաւ մը կը կթեն կոր, — Թող կթեն, հարուստ է, — Այո՛. բայց այս գնացքով երկու տարիէն մեզի պէս կ'ըլլայ, — Աւելի աղէկ. այն ատեն առանց քաշուելու երեսին կը զարնեմ ինչ տեսակ մարդ ըլլալը, — Մենք ո՛րչափ պարտք ունինք իրեն, — Գարտք ունինք մ'ըսեր, — Հապա ինչ ըսեմ, — Ինք մեզմէ ո՛րչափ պահանջ ունի, ըսէ՛, — Մի եւ նոյն բանը չէ՛, — Ո՛չ, — Ինչպէս, — Պահանջ բառով կը հասկնամ թէ ինք կը պարտի մեզմէ պահանջելու, — Իսկ պարտք բառով... — Պարտք բառով կը հասկնամ թէ մենք կը պարտինք իրեն տալու:

Բառերուն ստուգաբանական - հոգեբանութիւնը թերեւս աւելի մշակուէր՝ եթէ նոյն միջոցին՝ Տիգրան չլեւորադատար ոսկիներ համբուով, զորոնք Գառնիկին տուաւ: Այս վերջինը տեսրիկ մը հանեց, բացաւ եւ՝ քանի մը թուղթ զարնելէն ետքը՝ մի քանի բառ գրեց. տեսրիկը գոցեց՝ դարձեալ գրպանը գրաւ, ոտք ելաւ եւ ձեռքը Տիգրանին երկնցնելով,

— Ենթահակալ ենք Միւսիւ Տիգրան, ըսաւ, ձեր ազնուութիւնը երբէք չ'ենք կրնար մոռնալ, եւ կը յուսանք որ քանի մը օրէն ասեմը մէկէն կը վճարենք:

— Հոգ մի՛ ընէք, պատասխանեց Տիգրան, անպարկուտ հարկ չկայ: Երկու պարտատէրները ջերմապէս բարեկեցին և մեկնեցան:

Անոնք հազիւ գուքս ելած էին ու սենեակին մէջէն բացուեցաւ գուռ մը, որ նշտանեակին հետ հաղորդակցութիւնը կը դիւրացնէր, եւ գեղաղէմ ու վայելչակազմ կին մը երեւան ելաւ:

- Տիգրան անմիջապէս զայն դիմաւորեց և քովը նստեցուց, Արուսեակն էր սա, որուն աչքերուն մէջ անբնական բոց մը, զեմքին վրայ զայրոյթի հետքեր նկարուած էին. շուրթները հեգնական ժպիտով մը կրասաբաց էին, բայց խորագէտն Տիգրան ոչինչ նշմարեց, — Աղաւնիէն նամակ մը ստացայ, ըսաւ Տիգրան, — Գիտեմ. պատասխանեց Արուսեակ, — Ինչպէս գիտես, — Դուն հոս բարեկամներուց կարդացիր, ես հոն մտիկ ըրի, — Միթէ հոս եղած խօսակցութիւնը հոն կը լսուի՞ կոր:

ԱՆՄԱՆԵԱՆ ԵՂԲ.

ՊՅՔԵԱԿ ԿՐԿՆՅ ՍՐ ԿԿՆԱՆՅ
ՇԱՐԱ ԷՄԱՏ - ԷՏ - ՏԻՆ. ՍԱՆ ԺԱԶԷՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԴԻՄԱՑ

Մաքուր, արագ եւ նրաշխատունի եւն մեր պատասխանած ԲՕՍԹԻՄ-
ՆԵՐԸ ամեն ամոնց համար, որոնք կողմն ձաշակաւոր հազուսներ ու-
նենայ, Չախաւոր գ, Անրով.

ՆԱՀԱՆՔ

Կողմեցայ Տէ՛ր,
Իմ եսիս հետ ոտնակոխ,
Ու վատին դէ՛մ՝ անյողդողդ
Ես քալեցի մղձկներս:

Տոկացի Տէ՛ր,
Սլաքներու ուղղուած ինձ,
Ու հէգ սիրտըս անպղինձ
Դիմագրուեց անվհերս:

Լոկացի Տէ՛ր,
Նախատինքին խաճատող,
Ու սիրտ մը բիրտ, վատ, ատող
Ես պաշտեցի տիւ. գերիեր:

Պագ Տուի Տէ՛ր,
Մաքիներու գազանի,
Որոնց մէջ սիրտս պարմանի
Ճանկոտուեցաւ տարիներս:

Ժպտեցայ Տէ՛ր,
Էն դաճուղը ժպտիս,
Հոն՝ ուր սրբունքն անգութ զիս
Անխղճութար կը խեղդէր:

Կեղծեցի Տէ՛ր,
Ճիշտ լեզուս տակ ծածկած,
Աչքերու դէ՛մ անկասկած
Նոյա ընդմիջտ անտարբեր:

Բայց, այսօր Տէ՛ր,
Յաղթահարուած հէգ զինուոր,
Սիրտըս, հոգիս վերաւոր,
Կը նահանջեմ կիսամեծ:

Եգիպտոս ԱՆՄԱՆՕԹ

ՉԵՐՔ ՄԻՇՏ ԳԱՐՈՒՆ

Անցան օրերն փառաւոր
Մեր նախահարգ, ու սրգաւոր
Օրեր եկան յաջորդեցին,
Որ մեր Տունը քանդեցին:

Անցան օրերն երջանկութեան
Իւր հիմերով, յատակներով,
Որուն յաջորդ իբրեւ եկան
Սեւ առաւօտը մութ խաւարով:

Ու այժմ, երկիր մեր հայրենի,
Մերունազարդ ու ալեւոր,
Թըշուառութեան մէջ զգուշիւ,
Վերջը կ'ողբայ իւր դարաւոր:

Պէտք է ուխտեմ մէկ սիրտ, հոգի,
Օգնել անտէր հայրենիքի.
Որպէս զի փառքն հին օրերուն,
Իրեն դաճուն գերթ միշտ գարուն:

Գաբիէ Գեղ.ՈՒՆԻ

ՎԱՐՓՈՒՀԻ ԿՈՒՉՈՒԻ

Պատուաւոր ընտանիքի մը երկու
փոքրիկները զատարարակելու հա-
մար վարժուհիի մը պէտքը կայ:
Գոհացուցիչ ամսական
Դիմել Արշալոյս ի Տնօրինու-
թեան:

— Ամենայնակ կերպով: Սիրելիս,
կը տեսնեմ որ չ'ես ճանաչար մինչեւ
անգամ այն տունը, ո՛ւր կը բնակիս
այնքան ժամանակէ ՚ի վեր:

— Ի՞նչ բռն կ'ուզես, հարցուց
Տիգրան կասկածալի, համոզուած ըլլա-
լով որ իր — Արուսեակին — մասին գրու-
ցը աւանդներն ալ լսած էր մանկամարդ
կիներ:

— Ո՛չինչ, պատասխանեց Արուս-
եակ պակուցիչ ծիծաղով մը, սա մար-
դարիտներու եւ ազամանդներու խնդիրը
զիս չառ զուարճացուց:

— Ինչո՞ւ Աղաւնի, ըսաւ Տիգրան,
կը կարծէ թէ մեծ բան մը կ'արժեն:

— Եւ կը սխալի. պատասխանեց
Արուսեակ, Բայց, Տիգրան, Աղաւնին
քու նուիրած օղբերդ եւ ապարանջանդ
ունի իբր յիշատակ, դուռն անկէ բան մը
չ'ունիս:

— Ունիմ:

— Ի՞նչ:

— Ակոսայ մը:

— Ի՞նչպէս ակոսայ:

— Ճերմակ, յղկուռ, սզորկ փայ-
լուն ակոսայ մը:

— Աղաւնիին ակոսան:

— Նոյն իսկ իրեն:

Արուսեակին աչքերը կը փայլէին:

— Կրնամ տեսնել աս ակոսան:

— Ինչո՞ւ չէ. պատասխանեց Տիգ-
րան եւ բանալով զգրոցը որուն տակ
նստած էր, պզտիկ սուգ մը հանեց բա-
ցաւ եւ մէջէն բան մը հանելով Արուս-
եակին տուաւ:

Մանկամարդ կիրն առաւ, նայեցաւ
եւ քրթիչ մ'արձակեց:

— Ի՞նչ է, ի՞նչ կայ, հարցուց
Տիգրան:

— Սիրելիս սա կայ որ պառչ էս,
էչ էս, ջորի էս, անխիթ էս, իբր էս,
ստախոս էս, այսքանը կը բաւէ:

Տիգրան՝ Արուսեակին շարժումներ
ընէն եւ չեչտերէն հասկնալով որ կատա-
կելէ հետո էր, տեղէն ցատկեց եւ կնոջ
թիւը բռնելով:

— Աս ի՞նչ է, ի՞նչ եղար, ըսաւ
զողզողաձայն:

Թեւս ձգէ, անպիտան, գոչեց Ա-
րուսեակ եւ՝ ցնցուելով՝ հետո սլացաւ:

Պահ մը լռութիւն տիրեց:

— Կոպիտ, գոչեց դարձեալ սիրա-
վաճառուհին, կէպիտ, կեղծ ակոսայ մը,
ճշմարտէն զանազանելու կարող չ'ես եւ
հոմանուհիներուդ խաղեր ընելու կ'ել-
լես: Ատով ալ գոհ չ'ես ըլլար սուտեր
կը յերբերես բարեկամներդ քու փտած
անձիք վրայ սքանչացնելու համար...

ճոզա՛ճ, խէ՛ղ. անունդ մի՛ մոռնար
... Ըսէ՛ նայիմ. ես եր՛բ քեզի աղա-
ջեցի որ քու տարփուկիդ ըլլալու պատ-
ուոյն արժանանամ: Այո՛, երբ Աղաւնիին
վրայ այդ արդուզարդ տեսայ, փափա-
քեցայ քու յիմարութենէդ օղուտ քա-
ղել. եւ այս նպատակաւ քեզի աչք
խաղցուցի, շոյեցի գողցեցի եւ Աղա-
ւնին քեզմէ հեռացուցի: Վասն զի ինձի
պէս կ'իներ մի միայն նիւթականին կը
խորհին, միշտ աչքի առջ ունենալով
տաճանիւր, լքեալ աստածէտ ձերու իրեն
մը... Բայց եւ այնպէս, դարձեալ
քեզ նման խայտառակ մարդերէն աւելի
կ'արժենք. վասն զի եթէ այն խայտա-
ռակներուն թիւը քիչ մը պակսի, մեր
թիւը տասնապատիկ կը նուազի...

Անամո՛թ, ընկերութիւններէ արտաք-
ուսած, մարդավայի յարաբերութիւն-
ներէ զրկուած, անոք անօգնական կնոջ
մը ըրած խաղիք վրայ կը պարծիս...

Դուռն որ — հակառակ անառակութիւն-
ներուդ, որոնք թէ՛ տեսակով եւ թէ՛
քանակով մեր բրձնիքը շատ ու շատ
կը գերազանցեն — ամեն դուռը բաց կը
գտնես առջեզ, ամեն ակումբներու մէջ
կրնաս մտնել, ամենէն յարգելի կա-
նանց ձեռքը կրնաս սեղմել, ամեն տա-
ղանդաւորներու, ամեն բարոյախոս-
ներու, ամեն տեսակ կրօնաւորներու

հետ կրնաս տեսակցիլ, վասն զի այդ
մարդ էս. դուռն՝ պատկանելով այն
ինքնակոչ հզոր սեռին, որ կ'իներ տկար
սեռ յորջորջելով հանդերձ՝ ամեն միջոց
կը գործածէ զանոնք մտորեցնելու հա-
մար. դուռն՝ ըլլալով մի անդամը այն
ինքնահաւան դասակարգին, որ իր զո-
հերը ոտնակոխ կ'ընէ եւ վաղանցուկ
վայելքի մը համար հարիւրաւոր տկար
էակները միշտ բարոյապէս եւ երբեմն
Ֆիզիքապէս կը խողովոյն, զանոնք զըր-
կելով հրեշտակներուն անգամ նախան-
ձին արժանի անարատ մայր յորջորջու-
մէն. դուռն անխղճութար կը խաբես եւ
լրբօրէն կը ծաղրէս այն կ'իները, որոնք
իրենց օրապահիկը իրենց դահիճներուն
դրամով պահովելու պիտակի հարկին
մէջ կը դատուին: Ասկէ աւելի անզգա-
մութիւն, ասկէ աւելի անօրէնութիւն
կարելի է երեւակայել... Գոնէ գիտ-
ցիր որ, ձեր այդ անմեղ զոհերն ալ քիչ
չառ վրէժ կը լուծեն միջոցով մը, զոր
կարգարարեցէք ձեր կոյր յաւակնութեամբ

... Այն միջոցով յիսուսը անցուկ
կին մը սէր կը ծախէ նորատի կնոջ մը
պէս... Կը ծախէ ինչ որ չէ մեացած.
Կը ծախէ ժահահոտած բոյրը այն վար-
դին, զոր տարիներ առաջ հզոր սեռէն
անգամ մը քաղած է ստապատիք խոս-
տուժներով... Աղաւնի իր վրէժը կը
լուծէ քու ձեռքդ ձգելով ակոսայ մը,
որուն ընկերներուն ո՛չ մին, ինչպէս
նաեւ խարտեայ եւ հոծ մազերուն ո՛չ
մի թիւլ բնութեան պարզեւնեցը չ'են.
Անոնք աստիճանով եւ կեղծամագրոջ
դնուած են իր հոմանիւններուն դրամով...

սակայն ինքը ձեր չէ. հազիւ քոտա-
սունը հիւսիսն մէջ է... Երկու խոսք
ալ եւ կը վերջացնիմ. Ես, թէեւ ինկած,
թէեւ անպատիւ, ես քեզի դաս մը պի-
տի տամ լռելով պարտանդէսին եղե-
լու թիւը, զոր կրնայի մէկ օրու ան մէջ
տարածել Պօլսոյ չորս կողմը, եւ այս
կերպով քեզ անպատիւ եւ հայրդ ու
մայրդ գերեզման խրկել ամթախար:

Այս չարիքը ընելով հանդերձ, զարձեալ
առաւելութիւն մը պիտի ունենայի քու
վրայ. ճշմարտախօսի առաւելութիւնը:
Բայց քեզ այնքան կը քամարծմ եւ
ծնողքդ այն աստիճան գութս կը շարժեն
որ զիս հալածող ընկերութեան մի քանի
անդամներէն վրէժ չ'լուծելու վեհանձ-
նութիւնը կ'ունենամ: Ապերախտ,
գնա՛ գա՛ի՛ր բարեկամներդ, որոնք ք զ
կը նկատեն իբր կաթնտու կով, զոր
պիտի գանակոծեն երբ կաթը կտորի...
Մնա՛տ բարեաւ, Անա եւ կ'երթամ...

Երբ Տիգրան միտակ մտաց, բազ-
մային վրայ ինկաւ, եւ գլուխը ձեռքե-
րուն մէջ առնելով սկսաւ խոզալ:

1895 Ա. ՊԱԼԵԱՆ

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Կը ինչորոշ մեզմէ ծանուցանել
թէ՛ ի նպաստ Սասունցի տարաբաղդ
Նրիտասարդի մը սարքուած վիճակահա-
նութիւնը քաշուեր է Յունիս 24 ին Դը-
րբաթալ Պառի մէջ եւ 67 թիւը շահեր է:

Սոյն թիւը շահող տոմսին տէրը
թող հաճի զիմել Տ. Հ. Գրանեանի Հ.
Բ. Ը. Միութեան կեդրոնատեղին, 33
Շարա Մատապէկ 33:

ԱՒՕՏԻՐՈՑ ԳԱՀԱՓԱՌԱՆԳԻՆ

Այս շաբթուան հեռագրերը ծա-
նուցին եղբերական սպանութիւնը Աւր-
տըրիոյ գահաժառանգ Արիստոք Գրան-
տուա Ֆէրտինանտի եւ իր կնոջ Հօնէն.
պերիլի Սօֆի Դըսուելոյն, որ տեղի ունեցած
է Պանայի Մայրաքաղաք Սէրաճէվօր
մէջ, մինչ այս երկուքը կառքով Օթէլ
տը Վիլ պանդոկը կերպին եղբր, ըն-
դունելութեան մը համար:

1895 Ա. ՊԱԼԵԱՆ

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Այս շաբթուան հեռագրերը ծա-
նուցին եղբերական սպանութիւնը Աւր-
տըրիոյ գահաժառանգ Արիստոք Գրան-
տուա Ֆէրտինանտի եւ իր կնոջ Հօնէն.
պերիլի Սօֆի Դըսուելոյն, որ տեղի ունեցած
է Պանայի Մայրաքաղաք Սէրաճէվօր
մէջ, մինչ այս երկուքը կառքով Օթէլ
տը Վիլ պանդոկը կերպին եղբր, ըն-
դունելութեան մը համար:

1895 Ա. ՊԱԼԵԱՆ

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Այս շաբթուան հեռագրերը ծա-
նուցին եղբերական սպանութիւնը Աւր-
տըրիոյ գահաժառանգ Արիստոք Գրան-
տուա Ֆէրտինանտի եւ իր կնոջ Հօնէն.
պերիլի Սօֆի Դըսուելոյն, որ տեղի ունեցած
է Պանայի Մայրաքաղաք Սէրաճէվօր
մէջ, մինչ այս երկուքը կառքով Օթէլ
տը Վիլ պանդոկը կերպին եղբր, ըն-
դունելութեան մը համար:

1895 Ա. ՊԱԼԵԱՆ

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Այս շաբթուան հեռագրերը ծա-
նուցին եղբերական սպանութիւնը Աւր-
տըրիոյ գահաժառանգ Արիստոք Գրան-
տուա Ֆէրտինանտի եւ իր կնոջ Հօնէն.
պերիլի Սօֆի Դըսուելոյն, որ տեղի ունեցած
է Պանայի Մայրաքաղաք Սէրաճէվօր
մէջ, մինչ այս երկուքը կառքով Օթէլ
տը Վիլ պանդոկը կերպին եղբր, ըն-
դունելութեան մը համար:

1895 Ա. ՊԱԼԵԱՆ

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Այս շաբթուան հեռագրերը ծա-
նուցին եղբերական սպանութիւնը Աւր-
տըրիոյ գահաժառանգ Արիստոք Գրան-
տուա Ֆէրտինանտի եւ իր կնոջ Հօնէն.
պերիլի Սօֆի Դըսուելոյն, որ տեղի ունեցած
է Պանայի Մայրաքաղաք Սէրաճէվօր
մէջ, մինչ այս երկուքը կառքով Օթէլ
տը Վիլ պանդոկը կերպին եղբր, ըն-
դունելութեան մը համար:

1895 Ա. ՊԱԼԵԱՆ

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Այս շաբթուան հեռագրերը ծա-
նուցին եղբերական սպանութիւնը Աւր-
տըրիոյ գահաժառանգ Արիստոք Գրան-
տուա Ֆէրտինանտի եւ իր կնոջ Հօնէն.
պերիլի Սօֆի Դըսուելոյն, որ տեղի ունեցած
է Պանայի Մայրաքաղաք Սէրաճէվօր
մէջ, մինչ այս երկուքը կառքով Օթէլ
տը Վիլ պանդոկը կերպին եղբր, ըն-
դունելութեան մը համար:

1895 Ա. ՊԱԼԵԱՆ

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Այս շաբթուան հեռագրերը ծա-
նուցին եղբերական սպանութիւնը Աւր-
տըրիոյ գահաժառանգ Արիստոք Գրան-
տուա Ֆէրտինանտի եւ իր կնոջ Հօնէն.
պերիլի Սօֆի Դըսուելոյն, որ տեղի ունեցած
է Պանայի Մայրաքաղաք Սէրաճէվօր
մէջ, մինչ այս երկուքը կառքով Օթէլ
տը Վիլ պանդոկը կերպին եղբր, ըն-
դունելութեան մը համար:

1895 Ա. ՊԱԼԵԱՆ

ՄԵՆՈՒԹԵԱՆ ԽՈՂԵՐ

ԲԱՆՏԻՍ ՄԵՂ

Մուսթ է՛ մո՛ւթ աշխարհը ինձ հա- մար ա՛յն օրէն ի վեր . եբբ նա դառն տանջանարան մը դարցաւ ինձի :

Գործատեղիս՝ ուր ստիպուած եմ օրուան երեք շորորոզ մասը անցնելու իրական բանտ մ'է . վասն զի երկու քաջ հեռանալու համար իսկ ահագին մենաշնորհի կը կարօտիմ : Այսպէս յա- լիտեանական մենութեան դատապարտուած , չ'ունիմ սիրտանքի նշոյլ մ'իսկ : Եթէ գերեզմանը շատ հեռուէն միայն իր խոժոռ զեմքը ցոյց կուտայ , այն ալ Յոսեփուս կը պարտիմ :

Երեւակայութեանս առջեւ կը պատկերանան . հայրենիքս իր ամբողջ հըմայքովը . ծնողքս՝ որոնց կարօտով շարունակ կը տուայտիմ . ընկերներ՝ ազգականներ եւ վերջապէս բարեկամներ : Այս ամենը կ'ուզան կ'անցնին արհամարհոտ կամ գթոտ ակ'արկներով :

Օրուան աշխատութիւններէն յոգնած , կէս գիշերին կ'երթամ դատիւյի սենեակս , որ ուրուականներու օստան մը դարցած է : Սորհրդաւոր լուծեան մը մէջ ներս կը մտնեմ , ուր լամբալին աղօտ լոյսին տակ կը նշմարեմ սեղանս . որուն վրայ չորցած վարդեր միայն ունիմ . ցիրուցան գրքերու կոյտ մը եւ մէկ քանի նամակներ՝ որոնք միակ միւրիւրիս են : Պատին վրայ կը փայլին երբեմնի մտերիմներու լուսանկարները . որոնք ակամայ արցունքներ կը խնն աչքերէս :

Այսպէս մութը իջած հողիս վրայ ալ՝ լամբարս կը մարեմ եւ մեռելափն լուծեան մը մէջ սնզգայ կ'իջնամ մահճակալիս վրայ :

Ատուռն գեռ արշալոյսը չ'ծագած . երբ քաղցր երազներու աշխարհին մէջ պահ մը երջանկութեան մի քանի վայրկեաններ պիտի վայելելի յանկարծ ժամացոյցիս զարթուցիչը կը հնչէ . պարտականութիւն յիշեցնող խստամբեր պահակի մը պէս :

Արդէն կիսաբաց աչքերով անկողնէս ցատկած եմ , արիւն քրտինքի մէջ ողողուած : Յուսատեղութիւնս վայրկեանական կ'ըլլայ՝ տեսնելով որ նորին միակ եմ « Բանտիս մէջ »

Գահիրէ ԾԱՐՀԱՏ

ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Արժ. Տ. Մամբրէ ԲՆՅ. Վարդանեան մէկ տարեկան « Արշալոյս » նուիրած է Մուշի Առաջնորդարանին :

Տիար Հմայեակ Գրանեան մէկ տարեկան « Արշալոյս » կը նուիրէ զարձեւալ Մուշի Ս. Առաքելոց Թարգմանչայ Վանքին :

ՀԱԼԱԾԱՆԻ ԹՈՅՆԵՐՈՒՆ ԴԷՄ

Հակառակ այն բոլոր հաւատումներուն , որ թուրք կառավարութիւնը կուտայ Յոյներուն դէմ հայածանքը զազրած ըլլալը հաստատելու թափով մը . սակայն նորանոր դէպքեր ստոր հակառակը ապացուցանելու բնոյթ ունին :

Նոր - Էֆէսէն կը հեռագրեն թէ՛ տեղւոյն եւ չրջակայից Յոյները թուրք իշխանութիւններէն հրաման ստացած են ամենակարճ ժամանակ մէջ մեկնել քաղաքէն եւ իրիթիքի բնիկներէն 2500 հոգի Մամուս կղզին հասած են եւ նոյն տեղէն ուրիշ 6000 հոգիներ ալ նաւորկելու կսպանեն :

Քարաւորուի շրջակայ գիւղաքաղաքներէն 10,000 Յոյներ իրենց տուներէն արտաքսուած եւ անոնց տեղ գաղթական իսլամներ հաստատուած են :

Միւս կողմէ Իզմիրէն կը ծանուցանեն թէ՛ Մէրիքէօյի Յոյն քնակիչները մինչեւ չորս ժամ գիմադրած են Մավզէր հրազաններով զինուած թուրք սպասակներուն դէմ եւ վերջապէս ստիպուած են անձնատուր ըլլալ , իբրևու ետեւէ անոնց ստացած օգնութեան պատճառաւ :

Այս բնդհարու մին մէջ 30 Յոյներ սպաննուած են : Գիւղաքաղաքները թուրքերուն կողմէ կողոպտուած եւ կրակի տրուած ու վայրագութիւններ դործ դրուած են կիներու , աղջիկանց եւ պատանիներու վրայ :

Հին Ծօսէի քնակիչները՝ շատ մը պաշտպօզութեան խուճեր ետ մղելէ յետոյ , կանոնաւոր զօրաց անոնց միանալէն ստիպուած լքած են իրենց քաղաքները եւ առագաստանաւերով փախուստ տուած են : Ասոնց մէջ 50 է աւելի սպաննուածներ կան , 800 կիներ եւ տղաքներ տեղ չի գտնելով նաւերուն մէջ Ծրանուացի աշխարհագրական առաքելութեան պետին Պ. Շարթիլի տունը ապաստանած են որ Եռագոյն դօշ պարզելով , յայտարարած է թուրքերուն թէ՛ նախ պէտք է զինքը իր մարդիկներովը սպաննել եւ յետոյ մօտենալ իրմէ ապաստան գտնողներուն ջով : Պ. Շարթիլի հարցուցած է զինուորականի մը թէ ինչո՞ւ այս գէշ վարմունքը ցոյց կուտան . Ջինուորականը պատասխանած է թէ՛ իրենց մեծերուն հրամանին կը հնազանդին :

Սամուէն կը հեռագրեն թէ՛ Ակրի-իայէն 2000 գաղթականներ Ամերիկեան նաւով մը Սամուս հասած են , եւ ուրիշներ ալ դէպի Գիոս կը մեկնին : Գաղթականները փոխադրող երկու առագաստանաւեր ընկղմած են , որոնց պարունակած բոլոր գաղթական ճամբորդները խեղդուած են : Այս լուրերը , ինչ չափով ալ որ ստոյգ ըլլան , թուրքո - Յունական պատերազմը անխուսափելի կը դառնայ :

ՀԱՆՐԱՅԻՆ ԲԵՄ

Այս վերահարին ճակ հրատարակուած գրութիւններուն պատասխանատուութիւնը ստորագրողներուն կը պահանջի եւ քերթիս խմբագրութիւնը իբր օգիւնակ կը հրատարակի զանոնք :

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Գահիրէի Հայոց Աղխատիւնաւ Ընկերութեան Գործադիր Ժողովին Ի Բնագիր

Տիարք , Նկատուած է որ Աղքատախնամ Ընկերութեան վիճակահանութեան սուրճերուն վրայէն վերցուած է « Արշալոյս » ին անուամբ , որ նոյն վիճակահանութեան սուրճերուն հրապարակելու օրէն ի վեր նշանակուած էր անոր վրայ , Ալ - Ահրամի եւ Լուսաբեր - Արեւի հետ . եւ նոյն իսկ կը կարծուի թէ՛ տրուած արտօնութեան մէջ ալ անտես եղած չեն այդ թերթերուն անունները :

Արդ՝ Աղքատախնամի Գործադիր Ժողովից կը խնդրուի հրապարակաբար արտօնութիւն տալ թէ՛ ինչ զիտաւորութեամբ յապառուած է « Արշալոյս » ին անունը՝ որ գոյութիւն ունի այժմ եւ պահուած է « Լուսաբեր - Արեւ » ին անունը , որ գոյութեան զաղրած է արդէն : Եւ ինչ տրամաբանութեամբ եղած է այս փոփոխութիւնը :

Կը սիրենք յուսալ թէ՛ նորընտիր Պատ Գործ . Ժողովը բարդութիւններու առջեւը առնելու համար , պիտի բարեհաճի գոհացում տալ այս օրինաւոր դիտողութեան , ամենակարճ ժամանակի մէջ :

Որին յարգանքով ՍՄԱՆԱՂ

ԱՇԽԱՏԱՆՈՑ

ԱՐՈՒԵՍԱԿԻՏԱԿԱՆ ԵՒ ԸՆԹԱՑԻԿ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ

Ն . ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԵՒ ԸՆԿ .

Օրերայի Հրատարակիչ Վրայ . Իրիսրայ Պատիւն դիմաց .

Վերագրութեան արուեստի բոլոր ճիւղերը մասնագիտորէն կը կիրարկուին մեր աշխատանքին մէջ կատարեալ ճշգրտութեամբ : Առեւտրական գրասեն- եակներու յատուկ աշխատանքները . ինչպէս՝ Տարիք , պիւստոստիպիտի պղինձէ եւ քառաչուէ քիւկրուէ քոչ քիւկրու եւ այլ որոնք մեր տրամագրութեան տա . կը գտնուին գիւրամատչելի գներով . Impression en Relief

ՏԵՂԱԿԱՆ

Ն . Բ . ՈՒՄԻՎԸ այս պահուս Փարիզ կը գտնուի , ուր երկու շաբաթ մնալէ յետոյ Տիվոն լէ Պէն , եւ անկէ ալ Լոստրա պիտի հանդիպի :

ՊԱՆԳ ՍՄԱԹԷՆ Պանգ ս՝Աթէնի մէջ տեղի ունեցած զեղծումները քննելու համար , Յունաց Հիւպատոսական դատարանի Նախագահը քանի մը օրերէ ի վեր հարցաքննութիւնը կը կատարէ Պ . Բասթալիտիսին , որ յիշեալ դրամատան տեղեկութեանց Դիւանին պետն է :

ԲԱՆՏԵՐԸ

Բանտերու վարչութիւնը որոշած է . ներկայ տարուոյ կառավարական Պրեմիէին մէջ նախատեսուած երկու բանտերը կառուցանել . մին՝ Մանսուրայի եւ միւսը՝ Շիպիլիէն մէջ : Ասոնց կառուցումը շուտով սկսելով մինչեւ տարւոյս վերջը պիտի աւարտի :

ԳԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Տեղական թերթերը կը գրին թէ՛ « Մօսեան » օրաթերթի նախկին Ուրբագրապետը Ապու Շատի Պէյ , դատ բացած է թերթին վարչութեան դէմ , 2000 ոսկի պահանջելով իր յետեւալ ամսականներուն համար :

Այս գումարին փոխան ուզած է որ նամակատան հրահանգուի՝ որպէս զի թերթին անուամբ հասած գրամները իր տրամագրութեան ներքեւ պահէ , փոխանակ յանձնելու թերթին վարչութեան : Այն պահանջը Գահիրէի Նախանական Դատարանը քննելով վճիռը յետաձգած էր անձեալ շաբաթ օրուան եւ անարդար նկատելով եղած խնդրանքը , մերժած է անոր պրօպագանդան :

Կերեւի թէ՛ Մօսեանի նախկին խմբագրապետը այդ միջոցներով թերթը խափանելու միտումներ ունի :

ՎԵՐԱՍՍՈՒՄ

Տեղական Վաշինկի թերթը , որուն Ն . Վ Մայիս Փաշայի Նախարարապետութեան օրով արտօնութիւնը շնջուած էր , կ'ըսուի թէ՛ Ն . Վ . Բուշայի Փաշայի արտօնութեամբ վերստին պիտի հրատարակուի :

Այս մասին էլ - Անայի տեղական թերթը , հետեւեալ խորհրդածութիւնները կ'ընէ

« Թերթի մը արտօնութեան ջնջումը կամ խափանումը Նախարարաց Խորհրդոյն որոշումով տեղի կ'ունենայ , եւ հետեւաբար անոր վերերիւսումն ալ միեւնոյն Սորհուրդին որոշումէն պէտք է որ անցնի , յուսալի է , կ'ընէ նոյն թերթը՝ որ Նախարարաց Խորհուրդը գումարուելով պիտի վերցնէ Մամուլ օրէնքը , եւ նախորդ Նախարարներու օրով շնջուած թերթերը պիտի վերհրատարակուին » :

Էլ - Անայիի այս խորհրդածութիւններէն ա՛յնպէս կը հետեւի թէ՛ Վաշինկի վերերիւսումն միայն Նախարարապետին թողուտութեան արդիւնքն է եւ ո՛չ թէ Նախարարաց Խորհրդոյն :

ՈՐԴԵՍՊՈՒՆ ՄԸ

Նորածի՛ր մը մայրը չնչին պատճառաւ մը իր ամուսինէն բաժնուելով , դատ բացած է անոր դէմ , զաւակին անունը հօրը կողմէն հայթայթելու համար , եւ Շէրիի դատարանը մինչեւ երկու տարի 45 ական դերուչ ստանալով վճարելու որոշում տուած է :

Բարի հայր՝ այդ մեծ ծախքէն ազատելու համար , կ'որոշէ մէջ տեղէն վերցնել իր ուսերուն վրայ բեռ եղող այդ ծախքին շարժառիթը , եւ օր մը զաւակը զբօսցնելու կամ սիրելու համար , որը որ կուզէք . մօրը ձեռքէն կաննէ զայն եւ քիչ մը հեռացնելէ յետոյ , պուտ մը թունաւորուած կաթ կը խմցնէ անոր եւ կը վերագրանէ իր մօրը : Հազիւ մօրը ջով հասած , պատկեր սոսկալի դալարութիւնը մէջ հոգին կը աւանդէ : Աւելորդ է ըսել թէ՛ ոստիկանութիւնը կը ձերբակալէ որդեսպանը , օրինական հետապնդումները լրացնելու համար :

ԱՂԳԱՑԻՆ

ՃԱՄԲԱՅ ՏՈՒՆԻԿ

Անատուրի (իմա՛ Հայաստանի) բարենորոգմանց վերահսկիչ Վէսթինէնկ եւ Հօֆ Պէյերը . - Այլ թուրքա տիտղոս Անատուրի , որուն հաւերէնը « Մարգպան » յորջորջուեցաւ Հայաստանի համար - Եւրոպայէն Պոլիս վերադառնալով՝ թուրք կառավարութեան հրամանին պիտի սպասեն իրենց պաշտօնատեղիները մեկնելու համար , Բարի՛ յաջողութիւն բարեկարգիչ ուղեւորներուն :

ՆՇԱՆԱՌՈՍՈՒԹԻՒՆ

Կիրակի օրը զուտ ընտանեկան շրջանակի մէջ տեղի ունեցաւ Նաչա- նախօտութիւնը Տիար Արզար Պէրպէտեանի՝ ընդ Օր . Անթառամ Տէօքմէճեանի , որ քաղաքիս Մանթաշօֆ տան Պաշտօնեաներէն Տիար Յ . Տէօքմէճեանի եղբոր դուստրն է :

Մեր սրտագին շնորհաւորութիւնները :

ՄԵԿՆՈՒՄ

Ազն . Մկրտիչ Էֆ . Անդրանիկեան ամսոյս սկիզբը Աղէքսանդրիա փոխադրուեցաւ ընտանեօք ամառուան եղանակը հոն անցընելու համար :

Ազն . Տօքթ . Գ . Սուճեան Պէյ ամսոյս 2 ին ընտանեօք Եւրոպա մեկնեցաւ եւ երկու ամսոյ չափ պիտի մնայ հոն .

ՀԵՌԱԳԻՐ

Վիկենա 2 Յուլիս . - Իրաւար Գապրիւսից խոստովանած է քե՛ ինք կը պատկանի այն յնարախոսական կազմակերպութեան , որուն ծրագրին է Մեծ Սերպիս վր ստեղծել :

Վիկենա 2 Յուլիս . - Սպանեալ Արհիդուսին եւ դիւտիւնիս ւարմիկները ժամը 10 ին հոս հասան :

Տիւրացո 3 Յուլիս - Ապստոլները մօտ օրէն Տիւրացոյ վաշարելու դիւտիւնիս ունին :

Արքեի 3 Յուլիս . - Ապստոլներուն յաղթանակին վրայ Արքեիցոյ կազմակերպութեան շահ ծանր կերպարանք ստացած է :

Կ . Պոլիս 3 Յուլիս . - Թուրքեր եւ Յոյներ թաղկացեալ խառն Յանձնախումբ մը անտոյս 4 ին Իզմիր պիտի մեկնի զաղբուստ ստեղծելու եւ վնասուած քաղաքը ճշդելու համար . Չեզոք սերտութեան մը ընտրուած իրաւարար մ'աչ պիտի ընկերակցի իրենց , անհամաձայնութիւններ եթէ ծագին քառնաշու պաշտօնով :

T I R I N G

Թ Ի Ր Ի Ն Ք

ՊԱՎԱՔԻ ՓՈՂՈՑ ՆԱԻԿԻՆ ՓԱՍՏԱԼ

Վ. Ա. ՋԱՆՈՒԱՏԱՆ ԿԻՑ

ԵՂԱՆԱԿԻՆ ԵՎՐՍԱՐԱՍԵՆ ՏԵՍԱԿ ԵՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՍԱԾ ԵՆ ՓՈՒՔԱՅԷՔ ՕԳՏՈՒԼ

Կ. Պոլսոյ ամենածանօթ Թիֆլիսի Տան Գահիրէի Երրահաստատ Մասնաճիւղն է .

ՏՈՎԱՅԻՆ ԵՒ ԳԱՂԹԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Լ. ԵՆՈՎՔԵԱՆ ԵՒ ԸՆԿ. ԱՂԵՔԱՆԴՐԻԱ (Եղիպտոս)

Շարժական կանոնաւոր երթեւեկ .

Միացեալ Նահանգներու , Բա. նաւապի եւ Հարաւային Ամերիկա. յի համար .

Գաղթականներու համար շափաւոր գին .

Աչքի քննութիւնը ճիշտաւոր կը կատարուի տեղւոյս մէջ , Մանրահասակ սեղեկութեանց համար դիմել Պոստակայտքեան .

ՄՕՀԱՄԷՏ ԱԼԻ ՀՐԱՊԱՐԱԿ

Հեռագրական Հասցէ — ԼԵՆՕՔՕ Փոստարկի Թիւ 897

Թուրքիոյ գաւառներու մէջ փոխ - գործակալներ կը փնտրուին

ՎԻՃԱԿԱՎԱՆՈՒԹԻՒՆ ԱՂԿԱՏԱԿՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳԱՀԻՐԷՒ ՀԱՅՈՑ

245 դ թիւով Գահիրէ, 28 Յունիս 1914 Առաջին պարգև

Թիւ	13814	Ղրջ .	Ողջ	4000		
"	3408	"	"	400		
"	13847	"	"	200		
"	8339	"	"	100		
"	7484	"	"	"		
"	798	"	"	"		
"	9049	"	"	"		
"	6234	"	"	"		
"	11657	"	"	"		
Հետեւեալ 40 թիւերը կը շահին 70ա. կան դրուշ :						
95	187	256	569	1755	2007	2155
2161	2699	2830	3244	3839	3902	
3905	3968	4211	4307	4826	5002	
5587	6163	6208	6228	6473	7289	
7561	7601	8618	9943	10298		
10672	11117	11348	11705	11752		
13359	14152	14407	14680	15761		

ՓՈՐԱԳՐԻՉ

Ա. ՍԻՆԷՄԵԱՆ

ԶԻՆԳՕԿՐԱՔ

Մոնեստէս Աշի Փողոցին վրայ ՇԱՐՎ ԹՕՐԿՈՒՄԱՆ

GRD. BAR ABBAS

ՇԱՐՎ ՊԱՊ ԷԼ ՊԱՀՐԻ ՆԱԻԿԻՆ ՅԼԱՇԻՆ ՏԵՂ ՍԵՓԱԿԱՆԱՏԷՐԻՒՄ Ս. ԲԱԼԱՄՈՒՏԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԻ

Կուան Պառ Ապրիլսար կոչուած է ըլլայ հաստատուելու մը , ճոխ եւ ամենամաքուր կանաւորուած .

ՍԳԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԽՆԱՄԵԱԼ , ԱՐԱԳ ԵՒ ԿԱՆՈՒԱԿՈՐ .

Կը հրաւիրուին ընտանիքները , իրենց ժամադրաւոր ընտրել հոն . վստահ ըլլալով թէ՛ գոհ պիտի մնան .

Կուան Պառ Ապրիլսար մասնաւոր խնամքով ընտրած է իր բոլոր ըմպելիները՝ լաւագոյն տեսակներէ առաջնութիւն առելով ԼՕՎԷՆ ՊՐԱԿԻՆ համբաւեալ գարեջուրին . Օ՛ն ուրեմն . փութացէք դէպի Պար Ապրիլսար Ս . ՓԱԼԱՄՈՒՏԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԻ

THE SINGER MANUFACTURING Co

ՍԻՆԿԸՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Շարա-էլ-Մըրապի Տալիզ Պրայնի սեփականութեանը մէջ .


Այլապէս ամենէն շատագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԸՐՆԵՐ ԵՆ Եւ ասոնցմէ մինչեւ ցարդ 22.000,000 ծախուած է :

400 հ աւելի վկայական եւ մեքենաներով վարձատրուած , Երաշխատեալ մեքենաներ .

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախիսին մէջ ստացած է .

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԹՈՒՐԿԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԴՂՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ ԵՒ ԹԱԿԱՆՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԵՏԻՎԱՆԱՆ ՏԱՆ



Կեզմերէն զգուշանալ , ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր 'Ե.քենայի վրայ ՈՒՆԿԻՐ ԵՆԵԿԱՅ ԵՄԵՆԱՆՉԻՍ

Ձրի դասեր և նորոգուած թիւներ , յաճախորդաց տուններուն մէջ .

Վճարմանց դիւրութիւն Փոխանակութիւն կիներու նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ԳԻՆ ՉԱՓ Լ . ԱՇԽԱՐՀ . ԲՈՂՈՐ ԳԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ ՄԱՍՆԱՃԻՆՂԵՐ ՈՒՆԻ

ՃԱՇԱՐԱՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ՊԱՋՈՐ ՄԻՐՈՒՐ ԹԻՒ 19 ԱԻՏԵՍ ՊՅՅԱՃԵԱՆ

Մեր ճաշարանին մէջ կը պատրաստուին Եւրոպական եւ Արեւելեան ընտիր կերակուրներ . պանդուխտ երիտասարդները եթէ անգամ մը այցելեն մեծապէս գոհ պիտի մնան յանրապէս գիներէն և սպասակութենէն . 14

Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ի Ն

«Արշալոյս» ի ամբողջ Ռուսա. նիոյ գործակալութիւնը ստանձնած է Տիար Կ. Փիլիպպոսեան , որուն պէտք է դիմել թերթին վերաբերեալ ամէն գործերու համար . Մեր գործակալին հասցէն է .

Mr. G. B. Pilibossian
F. American
83 St. Mangalia
(Roumanie) Constantza

ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԿԵՈՍԵԱՆ ԴԵՐՉԱԿ ՎԱՃԱՌԱԿԱՆ

Փոխադրուած է Շարա Ապոն Էլ Ազիզ Ապոնի Գարազոլին մօտ .

Անոնք որ ճաշակաւոր գոսթիւն մը ունենալու համար զանազան տեղեր դիմած ու զգոհ մնացած են , թող անշամ մը մեր վաճառատունը այցելեն . պատրաստ եմ իրենց հետ պայմանաւորուելու որ՝ եթէ իրենց յանձնարարութիւնը նը գոհացուցիչ չ'գտնեն , կանխավճարը ամբողջովին ետ պիտի ստանան .

Այս պայմանը՝ ճաշակաւոր հագուելու փափաքողներուն համար , նըպաստաւոր առիթ մը պիտի ըլլայ :

Ապառիկ ապագանքները նկատողութեան չեն առնուիր , եւ անոնք որ ինծի կը դիմեն , զերբաւ կրնան ջմբջուներէ ապառիկին տարբերութիւնները , թէ գործի մտքութեան եւ թէ գիներու մասին :

1-50 ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԿԵՈՍԵԱՆ

Արսոնստր' ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

Սեփական Տպարան ԱՐՇԱԼՈՅՍ Լրագրոյ

ՏՊԱՐԱՆ

Ա Ր Շ Ա Լ Ո Յ Ս

ԱՐՇԱԼՈՅՍ Տպարանը՝ Արսոնստր' Եղիպսական կառավարութեան ներքին Գործոց նախարարութեան . ամենակեղ խնամքով կը տպագրէ .

1. — Արսոնստր' Օրաքերքեր , Հանդիսներ , Պրօշիւրներ , Պարբերակականներ եւ մանաւանդ Գիրքեր .
2. — Վաճառականական ձեւերներ՝ եւ գրասենեակի ամեն տեսակ քրպագրական պիտոյքներ՝ ամեն յեզուով .
3. — Յայտարարութիւններ , շրջաբերականներ , Ամսականչուխներ , Վագրիւրներ , եւ այլն .
4. — Հարսանեկան տուներ , մանագրներ եւ այլն .

ԱՐՇԱԼՈՅՍ Տպարանին հասցէն է , ց'Նոր սեօրիմուրիան . Շարա Մոնեստէս Աշի , Սիքսաճի երկարող թրակիչի գծին վրայ , Հարթ - Էլ Մասապէկ - Էլ Գահիրէ , թիւ 40 , Տիար Միլոսա Երիմեանի յարկարածին մէջ .